Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
մարտի 15-ի N 303 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԿԱՅՔԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Աշխարհի ավելի քան հարյուր երկրների հայ համայնքներում գործող սփյուռքյան տասնյակ հազարավոր կազմակերպություններ, հոգևոր կառույցներ, բարեգործական կազմակերպություններ, հիմնադրամներ, մշակութային և կրթական կազմակերպություններ, կուսակցություններ, հայագիտական կենտրոններ և ամբիոններ, գրախանութներ, գրադարաններ, մասնագիտական միություններ, ճանաչված սփյուռքահայեր և անհատներ, միլիոնավոր մեր հայրենակիցներ, կտրված լինելով Հայաստանից, կարիք ունեն գոնե առցանց ներկա լինել հայկական աշխարհում և վերջինիս կարևոր մասը կազմող հայկական առցանց մշակութային միջավայրում: Հայկական առցանց մշակութային միջավայրի կարևորագույն բաղադրիչներից են՝ համահայկական տեղեկատվական պորտալները, հայալեզու և հայաբովանդակ էլեկտրոնային գրադարանները, ինչպես նաև լեզվական և քերականական առանձնահատկություններ ունեցող հայության տարբեր հատվածների փոխըմբռնումը դյուրացնող ամենատարբեր ծրագրային գործիքները: Առցանց հայկական մշակութային միջավայրի ստեղծումն ու զարգացումն էապես կնպաստեն սփյուռքյան կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցությանը:

II. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

2. Սփյուռքում հայոց լեզվի պահպանման և տարածման խնդիրն օրակարգային է: Սփյուռքահայության ստվար հատվածը չի տիրապետում կամ մասնակիորեն է տիրապետում

մայրենի լեզվին: Գրականությունը հաճախ արևելահայերեն է և աբեղյանական ուղղագրությամբ, որին սփյուռքահայության ստվար մի զանգված վատ է տիրապետում, ինչն էլ լրացուցիչ խոչընդոտ է սփյուռքի տարբեր հատվածների և հայրենիքի միջև շփման համար: Սփյուռքում հայալեզու տպագիր գրականության ոչ բավարար քանակը կարող էր լրացնել համացանցը, սակայն, ցավոք, հայերենով տեքստերի քանակությունը համացանցում չափազանց քիչ է, ինչը թե՛ Հայաստանի և թե՛ սփյուռքի օգտվողներին հնարավորություն չի տալիս մնալու հայկական միջավայրում: Գրեթե բացակայում են հայկական էլեկտրոնային գրադարանները, ինչի պատճառով էլ սփյուռքի մեր հայրենակիցները, հատկապես նրանք, ովքեր չեն ապրում հայաշատ և խիտ բնակեցված համայնքներում, հիմնականում կտրվում են հայկական միջավայրից՝ հայկական մշակույթից, գրականությունից, արվեստից, ազգային արժեքներից:

III. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

3. Սփյուռքի հայ համայնքներում հայոց լեզվի երկու հատվածների փոխըմբռնման նպատակով 2009 թվականին իրականացվել են համացանցում արևելահայերենից արևմտահայերեն և հակառակը, փոխարկչի ծրագրի տեղադրման աշխատանքները, սակայն այս ծրագիրն ունի շարունակական զարգացման ու սպասարկման կարիք: Այս պահին ծրագիրն աշխատում է 45000 բառի սահմաններում: 2012 թվականի ընթացքում փոխարկչի ծրագրի բառապաշարի մեծացումն ու ալգորիթմական բազայի կատարելագործումն էլ ավելի կբարձրացնի ծրագրի արդյունավետությունը:

4. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության էլեկտրոնային հայալեզու գրադարանի ստեղծումը մեկն է այն պայմաններից, որի առկայության դեպքում աշխարհի ցանկացած կետում գտնվող հայը, ցանկության դեպքում, կկարողանա ապրել և գործել վիրտուալ հայկական աշխարհում՝ հայկական տեղեկատվական, մշակութային, կրթական միջավայրում: Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության էլեկտրոնային գրադա-

ռանում հաշվի են առնվել արևելահայերեն և արևմտահայերեն գրական ժառանգության առկայությունը, ժամանակակից և դասական ուղղագրությունները: Էլեկտրոնային գրադարանի շտեմարանները մշտապես համալրվելու են Հայաստանի, Արցախի, սփյուռքի դասական և ժամանակակից հեղինակների ստեղծագործություններով և աշխատություններով:

5. Հայրենիք-սփյուռք, սփյուռք-սփյուռք գործակցության տեղեկատվական հենքն ամրապնդելու և ընդլայնելու, տեղեկատվական բացը սփյուռքի հայ համայնքներում նվազագույնի հասցնելու նպատակով 2009 թվականից Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության կողմից ստեղծվել է «Հայերն այսօր» բազմալեզու էլեկտրոնային պարբերականը, 2012 թվականին (52 + 10) թողարկումներով կլրացվի հայկական համայնքների և Հայաստանի միջև եղած տեղեկատվական բացը:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

6. Ծրագրով նախատեսվող միջոցառումներից «Հայերն այսօր» բազմալեզու էլեկտրոնային պարբերականի հրատարակումը և Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության էլեկտրոնային գրադարանի համալրումն իրականացվելու են Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության «Հայրենիք-սփյուռք կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից, իսկ փոխարկչի համալրման աշխատանքների՝ արևելահայերենից արևմտահայերենը և հակառակը՝ այն ստեղծած հեղինակային խմբի կողմից:

V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

7. Ծրագիրը նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ֆինանսավորմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ